ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքների նախագծերի (փաստաթղթային կոդեր՝ Կ-034-17.09.2021-ՏՏԳՇ-011/0 - Կ-034[4]-17.09.2021-ՏՏԳՇ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված | Համապատասխան օրենքի վերնագրից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:<br>Նույն առաջարկը վերաբերելի է նաեւ Նախագծերի փաթեթում ներառված «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածներում նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 2. | ՀՀ կառավարություն | Նախագծի 12-րդ հոդված | Նախագծի 12-րդ հոդվածով Օրենքի 30-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում՝ քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համայնքի ղեկավարի տեղակալը համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի ղեկավար լինելուն վերաբերող Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը դուրս է մնում կարգավորումից: Մինչդեռ, «Պաշտպանության մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Աշխարհազորային բրիգադի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ եւ պատերազմի ժամանակ համապատասխան քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի ղեկավարի տեղակալն է, իսկ Երեւան քաղաքի վարչական շրջաններում՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք օրենքներով նախպատեսել միմյանց համապատասխանող կարգավորումներ: | | |
| **3.** | << կառավարություն | «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ մասեր | Նախագծի 1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը լրացվում են «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածում, որը վերաբերում է աշխարհագրական օբյեկտների անվանակոչմանը: Աշխարհագրական օբյեկտների անվանափոխմանը վերաբերող կարգավորումները նախատեսված են նույն օրենքի 5-րդ հոդվածում, որի 2-րդ մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանափոխումները պետք է բավարարեն սույն օրենքի 4 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի պահանջներին: Հոդվածի վերնագրի եւ բովանդակության | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխանությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում նախատեսել միայն անվանակոչմանը վերաբերող կարգավորումներ՝ «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում կատարելով համապատասխան հղումներ: | | |
| **4** | ՀՀ կառավարություն | Նախագծի 2-րդ հոդված | նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված լրացումն իմաստային առումով չի համապատասխանում նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին: Մասնավորապես, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխում է, որ աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետներին: Տվյալ դրույթը վերաբերում է անվանափոխման կամ անվանակոչման առաջարկություններ ներկայացնելուն, մինչդեռ լրացվող դրույթը վերաբերում է անվանակոչման կամ անվանափոխման կարգին, այլ ոչ թե առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգին: Հետեւաբար՝ նորմի միանշանակ ընկալումն ապահովելու նպատակով առաջարկում ենք առանձին սահմանել, որ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման առաջարկություններ ներկայացնելու կարգն է սահմանում Կառավարությունը կամ լրացումը կատարել առանձին նախադասության տեսքով: | Ընդունվել է | Ընդունվել է |